ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՓՊՄԱՊՁԲ-19/165-6

ք. Երևան 31. 01.2019թ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Գնորդի կողմից «Ձայնագրող սարքերի» ձեռքբերման N ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՊՄԱՊՁԲ-19/165, ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի նախաորակավորման ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարեցնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Վաճառողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:

3.3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՆԻԿՈ-ՏԵԿ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ ք.Երևան, Օրբելի 33Ա, բն.15
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱրմսՎիսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2500010332900100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 08209436
ՀՎՀՀ 02522157	էլ. հասցեն՝ deltant@mail.ru
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Հեռ. 091-43-74-10
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.